ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2018թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ.91 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել ««Փոքրիկ երկիր» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ Հ.91 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի հ.91 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հիմնադրվել է 1976թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Հաստատությունը կրթադաստիարակչական աշխատանք է իրականացնում նախադպրոցական տարիքի 2-6 տարեկան երեխաների համար: 2017թ. մանկապարտեզը հիմնանորոգվել է «Լույս» և «Բիայնա» կրթամշակութային բարեգործական հիմնադրամների կողմից: Հաստատությունն իր շուրջն է հավաքել հարյուրավոր մանկապարտեզահասակ երեխաների՝ իրականացնելով բազմաբովանդակ աշխատանքներ: Հաստատությունը փոքրիկ մի երկիր է, որտեղ երեխաները կրթվում և դաստիարակվում են յուրովի: Մանկապարտեզի աշխատակազմն ու ծնողական համայնքը մշտապես բարձր են գնահատել իրականացված աշխատանքները և նպատակ են դրել այն անվանափոխելու:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է հաստատությունն անվանափոխել ««Փոքրիկ երկիր» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆԻ Հ.91 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆԻ Հ.91 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ____

/կազմված --------թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2018թ.

N ___-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱԼԱԹԻԱ-

ՍԵԲԱՍՏԻԱ Տ/Բ-ի

ԿՈՂՄԻՑ 16.07.2004թ.

Գրանցման թիվ՝ 29021003092

Վկայական՝ 03 Ա 065399

ՀՎՀՀ՝ 01815234

24.07.2012թ.-ին գրանցված կանոնադրության

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2018թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ

_____

««ՓՈՔՐԻԿ ԵՐԿԻՐ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություններ/

ԵՐԵՎԱՆ 2018

«Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում, նախաբանում, 1-ին կետում «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել ««Փոքրիկ երկիր» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 24.07.2012թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: